

7035

281

1908

5-50

04 NOV 2009

281
47-50

30

ՄԵՐ ՏԵՄԵՐԱՆԻ

ՏԵՂԵԿԱԳԻՐ

Ս. ԷԶՄԻԱՆԻ ԳԻՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԲԱԺՆԻ

26879

ԿԱԶՄԵՑ

ԳԻՒՂԱՏՆՏԵՍ Կ. Կ. ՄԵԼԻԲ ՇԱՀՆԱԶԱՐԵԱՆՑ

ՎԱՂԱՐՉԱԳԱՏ

ՏԳԱՐԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՒՈՑ Ս. ԷԶՄԻԱՆԻ

1908

ՀԻՄՆԱԿԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԱՏԱՎԱՐՈՒՄԻ ԲԱԶՄԱ

ՀԱՅԱՍՏԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԱՏԱՎԱՐՈՒՄԻ ԲԱԶՄԱ

ՀԱՅԱՍՏԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԱՏԱՎԱՐՈՒՄԻ ԲԱԶՄԱ

ՀԱՅԱՍՏԱՆ

ՏԵՂԵԿԱԳԻՐ

Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ԳԻՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԲԱԺՆԻ

Կան հարցեր, որ ժամանակը, զրութիւնը ինքն է բնա-
քանաբար առաջ մղում և հերթական խնդիր դարձած՝ իրենց
լուծմանը սպասում: Այդպիսի հերթական խնդիրներից մին և
էջմիածնի ընդարձակ կալուածների և սեպհական վարկահո-
ղերի, այգիների և ագարակի բարեկարգութեան խնդիրն է,
որ մինչև այսօր անուշադրութեան մատնուած՝ մնացել է և
ոչ մի լուրջ քայլ չէ արուած նրանց կանոնաւոր շահագոր-
ծութեան մէջ դնելու:

Մի կողմը թողնելով այս ու այն թեմի կալուածների
զրութեան մասին խօսելը, որ մեզ հետո կտանէր, մենք մէջ
կրեինք միայն անցեալ 1906 թուականից մեր խնամքին
յանձնուած էջմիածնի հողերի, այգիների և ագարակի մասին
մեր դիտողութիւնները և այս վերջին ինն տարուայ տնտե-
սութեան պատկերը, որ հասկանալի լինի թէ ինչ ձևով է
առաջ տարուել և որչափ նա արդիւնաբեր է. եղել այդ ժա-
մանակամիջոցում և այժմ ինչ զրութեան մէջ է նա գտնուում:
էջմիածնի մայր Աթոռը ունի իր շուրջը 8500 դես. հող, որից
360. դես. տեղ բռնում են վաղարշապատի այգիները, 2200

դեա. նաֆարապատկան վարելահողեր են, որոնց կէսն է միայն մշակուում (միւս կէսը հանդստանում է յաջորդ տարուայ ցանքի համար), 1200 դեա. վանքի սեպհական վարելահողերն են, խոտահարքը (ղորուղներ) և արօտատեղերը, իսկ մնացած մօտ 5000 դեա. անջրդի ու անմշակ հողեր են, որ ծառայում են կարճ ժամանակաւ իբրև արօտատեղ:

Այդ հողերի կազմը ընդհանրապէս կաւաւաղային է, խճոտ և տեղ տեղ աղային բաղադրութեամբ (չորաքեւաթ) մանաւանդ դէպ հարաւ ընկած մասը, որ ներքեի զօրուղ է ասուում:

Դիրքը տափարակ է ի բաց առեալ հիւսիս-արեւելք ընկած աննշան թմբերը և այգիների տեղը, որ շատ ու քիչ բարձր է չրջապատող տափարակից:

Կլիման Արարատ, Արագած և Գեղարքունեաց լեռների շնորհիւ ձմեռը սաստիկ ցուրտ է, սառնամանիքը հասնում է—15°—20°-ի R. այնպէս որ խաղողի որթը բացօթեայ մնալով, ձմեռը ենթարկւում է ցրտահարութեան, ինչպէս և այլ ջերմութիւն սիրող տունկերը—նուրը, թուզը, նուշը ևն: Ամառը շոգ է և չորային, ջերմութիւնը հասնում է ստուերի մէջ 28°—30°-ի R. գարունը և աշունը մեղմ են երբեմնակի անձրևներով: Յաճախակի քամիներ են լինում հիւսիս-հարաւային ուղղութեամբ ամառը ժամը երեքից յետոյ:

Դատեսային աւխտութիւնները էջմիածնի չրջանում սկսւում են մարտի կիսից և դադարում են նոյեմբերի 20-ին, այնուհետև ամբողջ չորս ամիս գիւղացիք կտրւում են գրեթէ դրսի աշխատանքից և նրանց տաւարը, լծկանը փակուած մնում գոմերում:

Խմելու ջուրը Վաղարշապատից վերցնում են թէ վանքի քանդանից և թէ հորերից: Զուրը կարելի է անել առողջարար է, մանաւանդ քանդանին, որը բերուած է 3—4 վերստ հեռաւորութիւնից և հաղիւ է բաւականացնում տեղական կաթիլներին:

Ոռոգելու ջուրը, որ ամենաէական պահանջն է էջմիածնի չրջանում, աչքի է ընկնում իր սակաւութեամբ: Վաղարշապատի և վանքի բաժին ջուրը, որ ջրաբաշխական օրէնքներով սահմանուած է Բասախ գետի կէսը (միւս կէսը բա-

ժանւում է ուրիշ 20 գիւղերի վրայ), ներկայ դրութեամբ այնքան քիչ է, որ հաղիւ է բաւականացնում ամառը 360 դեա. այգիներին և մօտ 150 դեա. բամբակի ցանքներին: Զրի սակաւութեան պատճառաւ հողերի $\frac{1}{4}$ մասն է միայն մշակւում և այն մեծ մասամբ ցորենի ցանքների և աւուրտի համար: մնացած տեղերը ինչպէս յիշեցինք, մնում են խոպան և ապարդիւն:

Վաղարշապատի այգեգործութեան, հացարոյների և բամբակի մշակութեան եղանակը հողի կազմութեան, ջրի և կլիմայական պայմանների բացառիկ հանդամանքների շնորհիւ, այնքան էլ բաւարար չէ, թէ մշակագործութեան և թէ արդիւնաբերութեան տեսակէտից:

Վաղարշապատի 360 դեա. այգիները միջին հաշւով տալիս են 80—100 հազար պուդ խաղող, 50—60 հազար բուրլի արժողութեամբ: 1000—1200 դեա. վարելահողերը տալիս են 40—60 հազար պուդ ցորեն 50—70 հազար բուրլի արժողութեամբ, իսկ 150 դեա. բամբակի մշակութիւնը տալիս է 7—9 հազար պուդ կորզով բամբակ 25—30 հազար բուրլի արժողութեամբ:

Գիւղատնտեսութեան այդ երեք ճիւղերից գատ, Վաղարշապատի 800 տուն ժողովուրդը եկամուտի ուրիշ աղբիւր չունի, վաճառահանութեան նիւթը միայն բամբակն է, խաղողը կամ գինին, որ միջնորդների միջոցաւ ծախւում են այս ու այն ֆիրմային. ցորենը ոչ միայն չէ բաւականացնում տնային պէտքերին, այլ և դրսից է ներմուծւում, ինչպէս և գարին:

Մինչև ներկայ 1907 թիւը գիւղը տալիս էր վանքին բահրա դաշտային բերրի $\frac{1}{3}$ մասը, որը կազմւում էր մօտաւորապէս.

- 1) Բամբակ՝ 450—500 պուդ կորզով, 1500—1800 բ. արժ.
 - 2) Ծորեն՝ 150—160 խալվար 4500—6000 բ. »
 - 3) Աւուրտ 7—10,000 խուրձ 400—500 բ. »
 - 4) Եւ այգիհարկ 1308 բ.
- 1907 թ. վանքը վերցրել է բերքի $\frac{1}{8}$ մասը և ստացել Ծորեն՝ 160 խալվար—7000 բ. արժող.
Բամբակ՝ 420 պուդ—1500 բ. »
Աւուրտ 3330 խուրձ—170 բ. »

Եւ այդեհարկ 1308 ր. ընդամեն 9978 ր.

Այս ընդհանուր տեսութիւնից յետոյ դառնանք վանքի բուն, գիւղատնտեսական մասին ու ագարակին:

Քրքրիւով 1898—1904 թ. եօթը տարուայ հաշիւները, մենք տեսնում ենք, որ վանքի 1200 դեա. հողերի կէսը շարունակ տրուել է և այժմ էլ տրուած է կապալով 5800 րուբլիով: Միւս 600 դեաեատինից 200 դեաեատին զորուղն է (խոտահարքը) արօտատեղով, 30 դեա. ներսէսի ու Գէորգի անտառն է, մօտ 300 դեա. վարելահողերն է, որից վանքը ինքը վարել է և վարում է 80—120 դեա. տեղ. 30 դեաեատին էլ իր այգիներն են, որոնցից Դոխ, Լուսարար, Օղուղ իր ձեռքի տակն է ունեցել, մնացած այգիները Թուսեան, Վերի, Շողակաթ և Գայիանէ, տւել է կապալով ուրիշներին:

Վանքը իր ձեռքի տակ եղած թէ այգիները և թէ արտերը ոչ թէ իր անմիջական հսկողութեան տակն է առել, այլ տւել է կառնապանների (այգեպանների) և չարեքտարների, որոնք որոշ պարտականութիւններ իրենց վրայ առնելով, ստացել են խաղողի բերքից $\frac{1}{6}$ մասը, ծառապտուղներից կէսը, այգու խոտից $\frac{1}{3}$ մասը, մի մի սայլ արկատ (ծալամ) անունդ՝ հաց, պանիր, ձուկ, իւղ, բրինձ մինչև անգամ՝ ոտնաման: Այսպէս էլ չարեքտարները, որոնց պաշտօնը եղել է միմիայն աշնանը և գարնանը արտերը ջրելը և նրանց վրայ հսկողութիւնը մինչև հունձը, կալուորների հետ ստացել են բերքի $\frac{1}{3}$ մասը և անունդ:

Վանքի ագարակը, ինչպէս երևում է 1900—1904 թուականների մատեաններից ունեցել է 60—70 գոմշակովեր, 50—60 կովեր, 50 լծկան գոմէշ, 15 լծկան եղներ, 400 կթի ոչխար, 130—150 կթի այծեր և մանրատաւար ու դառներ աւելի քան 1200 զլուխ, որը բերել է վանքին 3—5000 ր. տարեկան արդիւնք, հաշուելով ծնունդը, բուրդը, կաշին, կաթը, պանիրը, իւղը և մորթած ապրանքը: Այդ ահագին տրտեսութիւնը փոխէփոխ կառավարել են այս ու այն վարդապետը, այս ու այն վէճիլը առանց որոշ ծրագրի, առանց կանոնաւոր հաշուապահութեան, որից կարելի լինէր բան հասկանալ:

Այդ ահագին տնտեսութիւնը, 1898—1906 թիւը չէ ունեցել ոչ հնձող մեքենաներ, ոչ խոտ հաւաքող, ոչ ցորեն

մաքրող, ոչ գիւլիւլ հանող, ոչ յարմար գութաններ, ոչ գինու պրես, ոչ խաղող ջարդելու մեքենայ, ոչ գինի եփ տալու չաներ, ոչ բամբակ մաքրող ջին, ոչ վազեր բժշկելու հարկաւոր գործիքներ, ոչ տաւարը ազնուադնելու բուղա, մինչև անգամ իր 45—65 մշտական ծառայողաց կենալու բնակարան, թէկուզ մի սենեակ:

Ամեն աշխատութիւն կատարուել է հասարակ նախնական ձևով և ոչ ոք չէ հետաքրքրուել թէ արտաքին աշխարհում ինչ փոփոխութիւններ են մտած այս ու այն ճիւղի մշակութեան եղանակի մէջ կամ ինչ նոր գործիքներ, մեքենաներ են լոյս ընկած, որ հեշտացնում են դաշտային աշխատութիւնները:

Թէ էջմիածնի գիւղատնտեսական բաժինը, այն է ագարակը իւր 100—աչափ կթաններով 60—70 լծկաններով, 400 կթի ոչխարներով, 80—120 դեա. ցորենի վարը, 15 դեա. այգիները, 150—200 դեա. խոտահարքը տարեկան ինչ ծախք և ինչ արդիւնք է ունեցել 1898—1904 թիւը, ահա ընդհանուր հաշիւը, որը քաղել ենք Սինօդին ներկայացրուած հաշուեմատեաններից, մեր կողմից լրացնելով ու զնահատելով այն ծախսերը կամ մուտքը, որ եղել է զանազան նիւթերով իբրև անունդ տրուած կամ իբրև բերք ստացուած *):

*) էջմիածնում մինչեւ օրս կանոնաւոր հաշուապահութիւն չէ մտած, ինչ բերք կամ նիւթ որ ստացուել է արտերից, այգիներից կամ ագարակից միմիայն նշանակել են քանակը առանց փողի վեր ածելու եւ նոյն ձևով էլ բաց են թողել: Սինօդի հաշիւներից երևում է. որ 1898 թուից մինչև 1904 թ. 3 տարուայ ընթացքում փողով մտած է ընդամեն զանազան մթերքներից, գինուց, անասուններից 4522 ր. 44 կ. կամ տարեկան միջին թուով 865 ր. Ուրիշ մուտք դրամով վանքը չէ ունեցել ագարակից կամ գիւղատնտեսութիւնից. ստացուած բերքը—խոտ, դարման, դարի, ցորեն, գինի եւն. սպառուել է իրեն ագարակի վրայ կամ միաբանութեան. մեր հաշիւների մէջ զանազան մթերքները մենք փողի ենք վեր ածել եւ այն լիւրի:

Գինի ստացել է	1200	փ. 1	բ. 50	կ. 1800	բ.	
Կաթ միաբանութեան	123	պ. 29	ֆ. 1	բ. պ. 123	բ. 72 կ.	
Մածոն	335	պ. 29	ֆ. 1	բ. պ. 335	բ. 50 կ.	
Կարագ մառանին	83	պ. 16	բ. պուտը	1328	բ.	
Պանիր	»	191	պ. 4	բ. »	764	բ.
Սեր	»	32	տարեկա	30	կ. 9	բ. 60 կ.
Ծնունդ տաւարի, ոչխարի և ծախած					2098	բ. 18 կ.
Բանջարանոցից					200	բ.

Ընդամեն . 13,608 բ. 18 կ.

Ասել է նիւթական վնաս է վանքը կրել 9282 բութի բայց այդ ծախքը չէ երևացել նրա անջրմ, որովհետև ամեն ինչ անհաշիւ մառանից ու չտնամարանից է դուրս եկել իսկ փողով Սինդը միմիայն մտել է 241 բ. 18 կոպ.

Ահա մի ուրիշ հաշիւ նոյն 1904 թուին միայն վառուցանքի վերաբերեալ:

93 դես. տեղ գութանելու	10	բ.	930	բ.		
Մարդոսելու և փողխելու			250	բ.		
Սերմ ձգել են՝ ցորեն	1255	պ. 1	բ. 20	կ. 1506	բ.	
Գարի սերմի և	150	պ. 80	կ. 120	բ.		
Հնձուրի 7	բ. 50	կ. դես.	705	բ.		
2 չարեքտարի կերակուր և հաց			160	բ.		
Կալուրի և հնձուրի հաց, միս, բրինձ, իւղ			420	բ.		
Ջրրաժանին			30	բ.		
Տւել են չարեքտարներին ու կալուրներին						
բաժին 930	պ. ցորեն	1	բ. 20	կ. 948	բ. 60	կ.
Գարի	35	պ.	80	կ. 28	բ.	

Ընդամեն . 5097 բ. 60 կ.

Մուտք ունեցել է	4770	պ. ցորեն	1	բ. 20	կ. 5674	բ.
«	215	պ. գարի	80	կ. 172	բ.	

Ընդամեն . 5846 բ.

Հանելով մուտքը ելքից 83 դեսնատին ցորենը և 10 դես. գարին տուել է ընդամեն 748 բ. 40 կ. կամ դեսնատինին մօտ 8 բ. արդիւնք, այնինչ եթէ այդ հողը գիւղացուն տար վաբելու և բերքի $\frac{1}{3}$ մասը առնէր, կրկնապատիկ արդիւնք կստանար առանց որ և է գլխացաւանքի:

Ի՞նչ է նսեկ դուռը վանքին:

Հաշիւներից երևում է որ մայիս 28-ից յունիս		
19-ը տւել են խոտի հնձուրին բրինձ 40 պ.	.	120 բ.
Շիրքախտ 2 պ. 30 ֆ.	.	14 բ.
Իւղ 3 պ. 35 ֆ.	.	64 բ.
20 օր հաց 80 հոգու օրական 8 պ. կամ ընդ-		
ամեն 160 պ.	.	192 բ.
Միս 2 պ.	.	6 բ.
Դէզ դնող 4 մշակների 15 պ. հաց.	.	18 բ.
Կերակուր մի ամիս	.	24 բ.
3 զորուղիների խոտ 60 սալլ	.	300 բ.
3 զորուղիների 6 ամսուայ ուտելիք	.	180 բ.
150—200 դես. հնձելու, հաւաքելու, խուրձ		
կապելու 100 խուրձը 60 կոպ.	20,000 պ.	800 բ.
Ընդամեն	.	1718 բ.

Ի՞նչ է նսեկ վանքի վրայ մի ծառայողի սնունդը:

1904 թ. յունիսի ընթացքում 41 հո-				
գու աւել են մառանից ալիւր օրական 16				
լիտր կամ 5 պ. ընդամեն 155 պ.			181	բ.
Շիրքախտ 1 պ. 20 ֆ.			9	բ.
Չաւար 45 պ.			55	բ.
Հաճարի մանրունք 3 պ.			3	բ.
Սոխ 1 պ.			50	կ.
Աղ 15 պ.			4	բ.
Բրինձ 4 պ.			12	բ.
Իւղ 1 պ. 22 ֆ.			24	բ. 80 կ.
Կողակ 300 հատ			12	բ.
Միս 36 պ. 3 ֆ.			108	բ.

Մակարոն, վերմիշել, կրուպա	1 ռ. 50 կ.
Ցորեն 23 պ.	27 ռ. 60 կ.
Կարտոֆիլ 3 պ.	1 ռ. 20 կ.
Դմակի իւղ 6 ֆունտ	1 ռ.
Ընդամեն	440 ռ. 60 կ.

Կամ ամեն մի ծառայողին	10 ռ. 70 կ.
Մեր հաշիւների մէջ ձգել ենք սնունդ ամսական մարդագլուխ	10 ռ.

Թէ արդարեւ Մայր Աթոռի տնտեսական վարչութիւնը անտարրեր է գտնուել ոչ միայն դէպի իր հեռաւոր կայուածները, այլ և իր ձեռքի տակ եղողները և երբեք չէ հետաքրքրուել նրանց վիճակով, դրան կարծիք չկայ: Մենք չենք կարողանում մեզ բացատրել թէ ինչ շարժառիթ կամ ստիպողական պահանջ է եղել տասնեակ տարիների ընթացքում տարեկան 20—25000 բուբլի ծախսել և շահուելու փոխարէն դեռ տարին 8000—9000 բուբլի էլ վնաս կրել և տնտեսապէս քայքայուել:

Հասկանալի կլինէր այդչափ ծախսերի բարոյական նշանակութիւնը, եթէ վանքը գոնէ որ և է նորութիւն մտցրած լինէր իր տնտեսութեան մէջ, որ ժողովուրդը օրինակ վերցընէր, այնինչ մենք ընդհակառակն ենք տեսնում:

Եւ այսօր իսկ այս նիւթական տապանալի ժամանակ վանական կառավարութիւնը կամ Սինօդի տնտեսական մասը երբեք չէ հետաքրքրուում թէ ինչ բանի վրայ են ծախսուում իրենից ստացուած գումարները կամ, արդեօք դրանք ծառայում են իրենց նպատակին թէ ոչ, այնինչ մենք յաճախ գանգատներ ենք լսում, որ մեծ ծախսեր, իբր անտեղի ձեռնարկութիւններ են լինում, առանց ազարակի տնտեսութեան հաշիւները իմանալու, առանց ծանօթանալու դործի հետ, բացադրութիւն խնդրելու կամ անձամբ վերահասու լինելու և իրողութիւնը ստուգելու*):

Որպէս զի Էջմիածնի միաբանութիւնը իր տան հաշիւը իմանայ և տեսնէ թէ ինչ բանի վրայ են ծախսուում ստացուած գումարները և ինչ նպատակի ծառայում, մենք ամենայն պատրաստակա՞նութեամբ տալիս ենք երկու տարուայ մեր գործառնութեանց համաձայն հաշիւը, նախապէս ծանօթացնելով 1906 թ. մարտին ներկայացրած մեր տեղեկագրի հետ, ուր պարզուած են մասամբ մեր հայեացքները և բռնելիք ուղղութիւնը ազարակի կամ վանքի գիւղատնտեսական բաժնի վերաբերութեամբ:

Ահա 1906 թւի տեղեկագրից քաղած մեր զիտողութիւնները:

«Մայր Աթոռը ունի այգիներ՝ Դոբի, Թուփիան, Լուսարար, Օղուզ, Շողակաթ, Գայիանէ: Որոնք մօտ 30 դեքտէտին տեղ են բռնում և շատ աննշան արդիւնք տալիս: Այգիները կապալառուների և թէ վերջին երկու տարուայ անտէրութեան շնորհիւ մեծ մասամբ փչացած են և շատերը հիմնովին վերանորոգելու պէտք ունին: Այգիները ամբողջովին չեն փորուում, չեն բժշկուում, չեն պարարտացնում, չկայ այն խնամատարութիւնը, որ նպատուած է արդիւնաբերութեան:

Գինեգործութիւնը կատարուում է սովորական նախնական ձևով, խաղողը ոտով կոխ է տրուում, քարերի օգնութեամբ մղւում, կարամներում կամ փոքր ամաններում եփ տրուում և զինին մի երկու անգամ յետ ածւում: Չկան ցարդող-ճիւղհանող մեքենայ, մամուլ և ոչ էլ եփ տալու մեծ ամաններ, որ հեշտապնում են գործը և ծախքը թեթեւեղում:

Գինեգործութեան համար Մայր Աթոռը ունի բաւականին ընդարձակ և յարմար մատան, շիրա եփ տալու տեղ, մօտ 2500 վեդրաչափ ամաններէն, օղեհան մեքենայ, որ 1886 թուին ստացուելով՝ մինչև օրս չէ գործադրուել: Այժմ զի-

դեկտ. 1907 թ. իմ ամսէ ամիս վանական կառավարութեան ներկայացրած հաշիւները դեռ կապած մնում են եւ չզիտենք երբ պիտի նայուին ու վաւերացնուին:

*) Անցեալ 1906 թւի մարտից սկսած մինչեւ այսօր 22-ն

Նետանը կայ գինի՝

1903 թ. 320 վ.

1904 թ. 501 վ.

1905 թ. 992 վ.

Ընդամեն 1813 վ.

Գինինքը գործադրում են միաբանութեան, վեհաբանի և հիւրերի համար, մի աննշան մասն է միայն վաճառահանում:

Անցառը թէ երջանկայիշատակ Ներսէս կաթողիկոսի և և թէ Գէորգ Դ-ի. տարիների ընթացքում կտրուելով և փոխարէնը չտնկուելով, հազիւ $\frac{1}{10}$ մասն է մնացել. ծառերը պառաւել են, անկուլթիւնը շատերի կանգնել և հետզհետէ չորանալու ենթակայ է: Ի նկատի առնելով, որ անտառի պահպանութիւնը կարեւոր է ոչ միայն վառելավայտ կամ շինութեան փայտ ստանալու տեսակէտից, այլ և նա շրջապատող օդի վրայ ևս զգալի ներգործութիւն ունի, Մայր Աթոռը ոչ միայն չէ ընդարձակել կամ պակասածների տեղը նորերով փոխարինել, այլ և այդ կոտորելը տարուէ տարի անխնայ չարունակուել է և այժմ էլ չարունակուում է:

Ագաւակը—այդ պատմական պլանը—որ ինչպէս երևում է իր շինութիւններից ունեցել է իր փառաւոր անցեալը իր գոմանոցները, ուր պահուել են հարիւրաւոր կթաններ ու լծկաններ, ոչխար և այծ, մեծ մասամբ դատարկ են, քայքայման ենթակայ և մեծ նորոգութեան կարօտ: Ունի ձիեր ու ոչխար պահելու տեղեր, դարման ու խոտ ածելու մեծ յարմարութիւններ, միայն մի աչքի ընկնող պակասութիւն, որ նկատուում է, այս է, որ ծառայող մարդկանց բնակարան չկայ այդ ահագին շինութեանց մէջ, այնպէս որ մարդ, կին, ծեր, երեխայ, առողջ, հիւանդ ամբողջ ձմեռը խոնուած են լոյսից ու օդից զուրկ գոմերի անկիւններում, անասուններից ու աղբից բարձրացած գոլորշիների մէջ, ուր արեւ չէ թափանցում և մարդավայել կեանք չկայ: Մի թեթեւ վարակիչ հիւանդութիւն և ահա պատրաստ են անմեղ զոհերը: Շատ ծառայողներ բնակարան չունենալու պատճառաւ, երեկոները գիւղն են գնում, առաւօտները վերադառնում, որ նոյնպէս իր անյարմարութիւններն ունի:

Ագաւակի գոմանոցները ծառայում են նմանապէս իբրեւ ապաստանարան կամ անկեղանոց դաղթական ընտանիքների, որոնց պէտք է առանձնացնել, աւելի տանիլի պայմանների մէջ պահել, եթէ Մայր Աթոռը հովանաւորելու մտքով է նրանց ապաստարան տալիս:

Ձիեր եւ անասուններ: Մայր Աթոռը այժմ ունի

Հեծնելու և կառքի ձիեր 21 հատ

Մատակներ . . . 4 »

Լծկան դոմէշներ . . . 25 »

Գոմէակովեր . . . 36 »

Գոմէաձագեր 1—2 տ. . . 37 »

Եզներ . . . 24 »

Կովեր . . . 18 »

Հորթեր 1—2 տ. . . 18 »

Ծնունդ 1906 թ. . . 13 »

Ընդամեն . 196 գլուխ.

Կթի կովերն ու գոմէշները 38 են, որոնք տալիս են օրական մօտաւորապէս 2 պ. կաթ կամ մօտ 2 ֆունտ ամեն մի կթանը, որը պէտք է ասել շատ աննշան է և հազիւ է լրացնում միայն հիւանդների կարիքը: Վանքը ստիպուած է դրսից գնել թէ իր մսացուն, թէ իւղը և թէ պահիրը: Ձիերից և տաւարից շատերը պառաւ են և պահելու անպէտք: Վանքը չունի ցուլ (բուլդոզ), որ ազնուացնէ կովերի սերունդը: Անասունները կերակրուում են գարունից մինչև աշուն գրաւում կանաչով, իսկ ձմեռը դարման ու խոտով, որի պաշարը հազիւ բաւականանայ մինչև խոտի հունձը:

Մայր Աթոռը ունի իր ձեռքի տակ մօտ 300 դեւ. վաւելահող, որից ինքը մշակում է տարեկան 65—80 դեւ. և շատ աննշան արդիւնք վերցնում: Հացաբոյսերի մշակութիւնը շատ անխնամ կերպով է կատարուում, ցորենը հնձում են ձեռով, կախում կամներով ու ջառջառնելով, որ թէ երկար ժամանակ է պահանջում և թէ նիւթական մեծ ծախք:

Մայր Աթոռը ունի ընդարձակ առօրացեղ և խոտահաւք, որի մի մասը կապալով տալիս է ամեն տարի: Վանքը չունի ոչխար, խոզ, հաւեղէն և բանջարանոց: Ունի ընդարձակ

թիւերը շերամի համար և շերամատուն, բայց ինքը չէ պարապում այդ ճիւղով:

Ինչպէս երևում է Մայր Աթոռի մինչև այժմ բռնած ընթացքից, նա հետևել է էքստրենգիւ տնտեսութեան, այսինքն մի տնտեսութեան, ուր որչափ հնարաւոր է ծախքերը չափաւորելու համար հողերը չեն պարարտացնում, մի մասն է միայն վարում. միւսը մնում է հանդստանալու, բացակայում են կատարելագործուած մեքենաները, հողերը կապալով են տրուում կամ մաս ստանալու պայմանաւ, պահում են մեծ խոտահարքեր, որոնք առանձին մշակութիւն չեն պահանջում, այնպէս էլ այգիների վերաբերութեամբ: Այդպիսի տնտեսութիւնը կարծիք չկայ շատ գլխացաւանքից ազատում է, բայց շոշափելի օգուտ չէ ներկայացնում ինչպէս ինտենզիւ տնտեսութեան ժամանակ, երբ հողը պարապ չեն թողնում, արօտները քիչ են, պարարտացնում են հողերը և լաւ մշակում, կատարելագործուած մեքենաներ բանեցնում և բոլոր ոյժը կետրոնացնում փոքր տարածութեան վրայ և մեծ արդիւնք ստանում:

«Այս համառօտ տեսութիւնից յետոյ դառնանք այս խնդրին թէ ինչ բանի վրայ պիտի դարձնենք մեր ուշադրութիւնը և ինչ միջոցներ գործ դնենք, որ գոյութիւն առնեցող ճիւղերը չփչանան, ևզածը պահպանուի և հողերը աւելի արդիւնաբեր դառնան:

Առաջին և էական խնդիրը, որ մեզ զգալիցնում է և հրաւիրում ենք Ս. Սինոդիդ ուշադրութիւնը, այդ ջրի խնդիրն է: Զուրն է այն առանցքը, որի շուրջը պատոււ են և բարեփոխութիւն և տնտեսական բարգաւաճումն և բարեկեցութիւն թէ ժողովրդի և թէ Մայր Աթոռի:

Ամեն մի բարի ձգտում, մշակուած ծրագիր, աշխատանք, դրամադուբա ապարդիւն կանցնի էջմիածնում, եթէ կալուածքը ջրի կողմից չապահովուի:

Ի՞նչ կարող է անել ժողովուրդը կամ իր գործին արդի ու հմուտ գիւղատնտեսը, եթէ նրա ձեռները կապուած են, եթէ նրա վարը, ցանքսը, այգին ժամանակին չեն ջրում կամ այդ ջուրը բաւականութիւն չէ տալիս: Զրի քանակիցն է կախուած այս ու այն բարեփոխութիւն մտցնելու և արդիւնաբեր ճիւղերը ընդարձակելու խնդիրը: Զրի հարցը նոր

չէ, դրա համար շատ անդամ է խնդիր բարձրացել, շատ անգամ է ծրագիր կազմուել, փորձեր եղել, բայց մի վերջնական լուծումն չէ ստացել՝ դրական կամ բացասական հետեանքի հասել: Այն ջուրը, որ այժմ ունին վաղարշապատցիք և Մայր Աթոռը, ներկայ դրութեամբ ոչ միայն բաւարար չէ, այլ և յաճախ ամենքին նեղ կացութեան մէջ է դնում երաշտ տարիներին: Բայց չէ որ ազգաբնակութիւնը տարեցտարի շատանում է, շատանում դրա հետ համընթաց և ցանքսերն ու այգիները ընդարձակելու պահանջը, քանի որ Թուրքիոյ ուրիշ աղբիւր չկայ և հողը ինքը պիտի բոլոր բերանները կերակրէ: Ահա թէ ինչու Մայր Աթոռը ի նկատի առնելով մի կողմից իր շահերը, որ անտառը, այգիները, արօտատեղերը, վար ու ցանքսը ջրի կողմից ապահովացնելով միայն կարող են կանոնաւոր շահագործութեան մէջ մտնել, միւս կողմից ամբողջ վաղարշապատի տնտեսական վիճակը, որի հետ կապուած են և իր շահերը, դրանով միայն կրարեփոխուի, մենք առաջարկում ենք կրկին զբաղուել ջրի խնդրով և մասնագէտ ու ձեռնաստ անձանց միջոցաւ միանգամայն պարզել այս խնդիրը և բաւարարութիւն տալ չեմ ասում ապագայում լինելիք, գոնէ ներկայ պահանջներին:

Պէտք է ի նկատի ունենալ, որ թէ ջրի ահագին հոսանքներ կան փոքր խորութեան մէջ և թէ Սև ջուրը անցնում է իր սահմաններից, որից 30 բաշ ջուր վերցնելու իրաւունք է տրուած վանքին և մի երկու գիւղերի և կարելի է քամու, շոգու, ելեքարականութեան ուժի միջոցաւ բարձրացնել և վանական հողերի վերայ ձգել: Մենք հաւատացած ենք, որ գոյութիւն ունեցող քանքաններն իսկ, եթէ վերանորոգուին և Վեհափառ Հայրիկի նոր քանքանը երկայնացնուի դէպի աջ ու ձախ ճիւղաւորութիւն ունենայ, գոնէ կէս կէս վերստ երկայնութեամբ, բաւական նպաստած կլինի գործին: Առուների մաքրելը և կանոնաւորելը ևս մեծ նշանակութիւն ունի և այդ ևս չպէտք է անտես առնուի *):

(*) Վանքը ունի Յակովբ Ջուղայեցի կաթողիկոսից մնացած Դուլակի ակերակ ջրամբարը, որի մի կողմը պատ քաշելով (երեք կողմը բարձր բնական շրջապատ ունի) եւ Շահարիսի ջուրը դարնան հեղեղների ժամանակ կամ ձմեռը մէջը կապելով՝ ամառուայ

Ջրի հարցի հետ կապուած լինելով մի շարք ձեռնարկութիւններ, որ մենք մտադիր ենք հետզհետէ մտցնել, որ մի փոքր ի շատէ ապահովութիւն ունեցանք ջրի կողմից, այս տարի բացասական հետեանքների չհասնելու համար, մեզ մնում է սահմանափակել մեր գործունէութեան ասպարէզը և ուշադրութիւն դարձնել հետեանքների վրայ:

Ա. Անճառի, որ ինչպէս յիշեցինք ահագին գեր է կատարել և պիտի կատարէ վանքի տնտեսական կեանքի մէջ:

Այլքի առաջ ունենալով անտառի տւած օգուտները առողջապահական և տնտեսական տեսակէտից, պէտք է նրա շահագործութիւնը զգուշաւոր և հեռատեսութեամբ լինի: Ամեն տարի ծառերից որոշ քանակութիւն պիտի կտրուի և նրանց փոխարէնը նորերը տնկուի և խնամքով պահպանուի մինչև զարգանալը: Վանքի անտառը, ինչպէս յայտնի է ամենքին, այն յետադարձ չրջանի մէջն է, երբ աճելութիւնը

ամիսներին մեծ ծառայութիւն կարող է անել վանքի հիւսիսային կողմը ընկած բարձրադիր մասերին:

Ունի Երեւանի տակից Զանգուից վերցրած մի առու վանքի հիւսիսային կողմի հողերը ջրելու, որ նահապետ կաթողիկոսի ժամանակներից մինչև Աստուածատուր կաթողիկոսի օրերը օգտուել է եւ յետոյ անուշադիր մնալով, կորցրել իրաւունքը: այժմ կարելի է նորից հարց բարձրացնել եւ վերանորոգել այդ իրաւունքը, եթէ ետեւից զնացող լինի: Կայ Համբերդի եւ Քասաղի ծորը, ուր ահագին ջրամբարներ կարելի է շինել եւ հազարաւոր դեսեատին տեղ ջրել: Այս ամենը ուսումնասիրութեան եւ հետազոտութեան կարօտ են եւ մենք համոզուած ենք, որ փոքր ինչ լրջօրէն վերաբերուելով գործին, մենք ջրի կողմից կապահովենք ոչ միայն Էջմիածնի ու Վաղարշապատի հողերը, այլ եւ շրջակայ դիւզերի:

Ջրի մասին այս տարի Բագու մեզ յաջողուեց պ. պ. Բողգան Բ. Դոյուխանեանցի եւ Բազրատ Շխանցի եղանդուն մասնակցութեամբ մի ընկերութիւն կազմել, որի նպատակն է որոշ պայմաններով Էջմիածնի հողերին ջուր մատակարարել, արդիւնքի մեծ մասը վանքին թողնելով: Այս ընկերութիւնը յոյս ունինք, որ այս տարուանից մեղմամուկս կլինի գործին եւ իրանով կնպաստէ ոչ միայն վանքին, այլ եւ այն ժողովրդին, որ ապրուստի հորիշ աղբիւր չունի եւ ջրից է կախուած նրա փրկութիւնը:

առաջ գնալու փոխարէն՝ կամաց կամաց թուլանում է և ծառը վերնից սկսած՝ չորանալով՝ դէպի բունը իջնում, այնպէս որ մենք եթէ շուտով չվերականգնենք, մի քանի տարիներից մենք անուշով միայն անտառ կունենանք: Անտառի վերանորոգութեան համար ոչ մի ծախս չպիտի խնայուի և եթէ վանքը միջոց ունի, դեռ պիտի աւելի ընդարձակէ: Անտառի մէջ առաւելապէս պիտի տնկուին այնպիսի ծառեր, որոնք շուտ են աճում, շատ ջուր չեն պահանջում և գիմանում են չոգերին:

Բ. Այգեգործութեան ճիւղերից վաղի մշակութիւնը Արարատեան նահանգում դեռ Նոյի օրերից գոյութիւն ունի. ունեցել է իր փառաւոր անցեալը, որին վկայ են պատմական հնձանները և իրուր չեն բուսաբանները մեր երկին խաղողի որթի հայրենիքը և խանձարուրը համարել: Այժմ վազեմի գինեատանները չկան, նրա մշակութիւնը աչքաթող է արուած. Էջմիածնի սեպհական այգիները որ աւելի բարեկարգ վիճակի մէջ պիտի լինէին, գոնէ դիւղական այգիների հետ համեմատած, շատ յետ են մնացել և մեծ մասամբ փչացել. այն ինչ կանոնաւորելով դեսեատինին 200 բուբուլց աւել զուտ արդիւնք կարող են տալ: Այժմ քանի որ հաղորդակցութիւնը հեշտացել է, ուտելու խաղողների արտահանութեան համար մեծ ասպարէզ բացուել, միւս կողմից տեղական գինիների պահանջը շատացել թէ կոնեակի գործարանների համար և թէ կովկասեան թոյլ գինիներին խառնուրդի համար, արժէ վաղի մշակութեան վրայ առանձին ուշադրութիւն դարձնել: Այս տարի որչափ հնարաւոր է և ժամանակն ու աշխատող ձեռքը թոյլ կտայ, Դոյ, Լուսարար և միւս այգիների մէջ եղած պարապ տեղերը կլցուին, այգիները կփորուեն, կբժշկուին և անհրաժեշտ գործողութիւնները կկատարուեն: Միաժամանակ և նոր մատներ կգրուին 2 դեսեատին նոր այգի ձգելու: Թումանյանի այգին, որ այգիների մէջ ամենից ընդարձակն է, քանի տարիներից ի վեր անխնամ թողնելով՝ բոլորովին փչացել է. այս տարի մտադիր ենք նրա վերանորոգութիւնը սկսել: Թումանյանի այգու և Լուսարարի մէջ տեղ ընկած կան փոքրիկ այգիներ, որ եթէ առնուին և միացնուին ինչպէս և Թումանյանի պարսպից դուրս ընկած վանքի սեպհական հողը, այն ժամանակ վաղի մշակութիւնը կըկետրոնանայ:

Ղուի և Թումանի այգիների վրայ: Ղուի այգուն կից ևս կայ
Հոբիսիմէի վանքի հողը և Գայիանէի վանքի այգին, որոնք
նոյնպէս պիտի միացնուին:

Այգիների վրայ անելիք ծախքերը այս տարի գուցէ
չծածկեն իրենց տւած մուտքը, բայց պտղաբերութիւնը չո-
չափելի կլինի երկրորդ տարուանից, երբ վաղերը նորմալ
դրութեան կհասնեն: Առանց հիմնական փոփոխութեան,
առանց ծախքեր անելու դժուար է այդ այգիներից շահ
ստանալ:

Վաղի մշակութեան համար չկան բահեր, քաղհան գոր-
ծիքներ, բժշկելու միջոցներ և գործիքներ, և այլ հարկաւոր
պարագայք:

Վաղի մշակութեան հետ կապուած է գինեգործութիւնը
և օղեհանութիւնը: Աչքի առաջ ունենալով, որ այժմ մօտ
1200 վեդրօ (1905-ին ստացուել է 992 վ) գինի է ստաց-
ւում, բայց այդ քանակութիւնը կարող է կրկնապատկուել և
և եռապատկուել և գինիների կէսը չսպառուել ու մնալ երկ-
րորդ տարին, ուստի դրա համապատասխան պէտք է ամա-
նեղէն ունենալ: Այս տարուայ համար անհրաժեշտ է մի
ջարդող-շահահան անող մեքենայ, մի մզելու մամուլ, 5 մեծ
շահներ 200—300 վեդրանոց շիրա եփ տալու, 2—3 փայտեայ
տաշտեր խաղող թափելու, քաղլակներ, խաղող կրելու տա-
կառներ և գինետան վերաբերեալ մանր մունր գործիքներ:

Աչքի առաջ ունենալով, որ վանքը ունի կոնեակ կամ
արաղ քաշելու գործիք, պատրաստի չէնք, ընդարձակ զինե-
տուն և այլ յարմարութիւններ, մենք խորհուրդ կտայինք
հէնց այս տարուանից փոքր չափով սկսելով գործը՝ հիմքը
դնել օգու գործարանին և վաճառահանութեան նիւթ շինել
գինին, օղին ու կոնեակը: Այն դէպքում երբ վանքը միայնակ
դժուարանայ այդ գործը ապահով հողի վրայ գնելու (նիւ-
թականի կողմից) կարելի է ընկերական հիմունքների վրայ
գնել գործը և Վաղարշապատի այդեռէրերին միջոց տալ դրա-
նով աւելի շահաւէտ կերպով իրենց այգիների բերքը վա-
ճառելու:

Գ. Մրգաբեր այգիին թէև այնքան ծախք չէ պահան-
ջում, բայց այդ ճիւղը առ այժմ չէ կարող մեծ ծաւալ ու-
նենալ և արդիւնաւէտ լինել, ուստի նա աւելի տնային

պէտքերի համար պիտի ծառայէ, քան վաճառահանութեան
աղբիւր դառնայ: Այս տարի 2—3 դեսեատին տեղ մրգաբեր
ծառեր կտնկուին զլիսաւորապէս խնձորենիք, թէ նախկին
բուլվարի մէջ և թէ Գայիանէի վանքին կից հողում:

Փ. Հացաբոյսերի մօակութիւնը: Քանի որ Մայր Աթոռ
ունի սեպհական վարելահողեր, լծկան եղն ու գոմէշ, քանի
որ պահում է ձիեր ու տաւար և նրանց կերակրում մեծ
մասամբ խոտ ու դարմանով, աւելի շահաւէտ է, որ ինքը
մշակէ իր հողերը քան կապալով սրան նրան տալ: Հացա-
բոյսերի համար իր ձեռքի տակ եղած 300 դեսեատին հողե-
րից 100—120 դես, կյատկացնուի իւրաքանչիւր տարի ցո-
րենի, գարու և այլ բոյսերի մշակութեան, մնացածը կհան-
գըստանայ, քանի որ պարարտացուցիչ նիւթեր չկան և մի-
անգամից դժուար է առույտի միջոցաւ հողերի արգասա-
ւորելը:

Պէտք է ի նկատի առնել, որ սեպհական վարը Էջմի-
ածնապատկան հողերում միջին հաշւով տալիս է դեսեատինին
25—30 բուլբի զուտ արդիւնք, այնինչ նոյն տարածութիւնը
ուրիշներին կապալով տալու դէպքում կամ բերքի $\frac{1}{3}$ մասը
ստանալուց՝ զուտ արդիւնքը միայն 14 բուլբի է և այն՝ երբ
դեսեատինը կտայ ոչ պակաս քան 60—70 պուտ ցորեն:

Հացաբոյսերի մշակութիւնը ոչ միայն վանքական հո-
ղերում, այլ և ամբողջ Երևանեան նահանգում շատ յետաձգանք
վիճակի մէջ է և տաժանելի աշխատութեանց հետ կապուած:
Վարը լինում է Ռամսօնի ծանր գութաններով, որին լծում
են ոչ պակաս քան հինգ զոյգ եղ ու գոմէշ, երկաթէ փող-
խեր չեն բանեցնում կոշտերը մանրելու, ջրելու գործը դիւ-
րացնելու համար սերմնուլուց յետոյ արտի գլխից մինչև ծայրը
ամեն 3—4 արշինի վրայ կէս արշին բարձրութեամբ թմբեր
են շինում: Չկայ սերմը գիւլիլից մաքրելու, հնձող և կալսող
մեքենաներ և դեռ չեն մտել դրանք գործածութեան մէջ,
որով այդ աշխատութիւնները ձեռքի միջոցաւ կատարելով՝
երեք անգամ աւելի թանկ են նստում, մօտաւորապէս դես.
9—10 բուլբի:

Հացաբոյսերի մշակութեան համար անհրաժեշտ են 3
գութաններ Էկերտի, որ աւելի թեթեւ են, հնձող-կալսող մե-
քենայ, երկաթէ փողխեր, և կալսող-դարման շինող մեքե-

նայ, որը կրանի և գիւղացիների համար և 2—3 տարուայ մէջ իր ծախքը կհանէ: Կալսող մեքենան անգնահատելի է այն տեղերում, ուր մշակ ձեռք թանգ է և հունձը ենթակայ է անձրևներից և այլ պատահարներից փչանալու: Կալսող մեքենայ ունենալուց՝ կարելի է հեշտացնել և գիւղացիների գործը և կալմաս (բահրա) ստանալու խնդիրը, ուղղակի խուրձեր ստանալով արտից:

Հացաբոյսերի մշակութիւնը պիտի պահպանուի մինչև ջրի հարցը կատարելապէս պարզուելը և հետզհետէ պիտի տեղի տայ բամբակի և ձէթ տուող բոյսերի մշակութեան:

Ե. Բամբակի մշակութիւնը: Բամբակի մշակութեամբ մինչև այսօր վանքը չէ զբաղուել, չնայելով որ նա աւելի արգիւնաւէտ է քան միւս ճիւղերը գիւղատնտեսութեան մէջ. բամբակը շուտ սպառող ապրանք է, մեծ ինվէստար չէ պահանջում, ապրանքը իր գինը ունի և միշտ պահանջ կայ: Վանական հողերը և կլիմայական պայմանները նպաստաւոր են բամբակի մշակութեան համար և կարելի է ընդարձակ տեղ տալ, եթէ ջրի խնդիրը չնեղէ: Այս տարի մօտ 10 դեռ. տեղ կվարենք և դրա հետեանքին նայած՝ հետզհետէ կընդարձակենք:

Զ. Անասպահութիւնը այն է եղ, կով, գոմէշ ձի վանքի տնտեսութեան համար անհրաժեշտ է, սակայն անորոշ է թէ տաւարը ինչ պահանջների համար պիտի ծառայէ, արգեօք իբրև մսացու, իբրև կաթնատու թէ ոյժ արտադրող լծկան: Ներկայ դրութեամբ տաւարը երկու նպատակի է ծառայում իբրև լծկան և իբրև կաթնատու, բայց այնպէս թոյլ, որ չէ, գոհացնում վանքի պահանջները: Այժմ խնամուում են 54 կով ու գոմէշով որոնցից 40-ը կթուում են, և ստանում ենք օրական 2 պուդ կաթ, որ լաւ խնամատարութեան ժամանակ չենք ստում 5 ընտիր տեսակի այլ միջակ կովեր կալող են այդքանը տալ. կովերի կամ գոմէշկովերի քիչ կաթ արտադրելը մենք վերագրում ենք նրանց տւած սնունդին, որը գլխովին գնում է կենդանու օրգանիզմի պահպանութեան և կաթի համար շատ աննշան բան է մնում, ահա թէ ինչու լաւ է մի կով ունենալ լաւ կերակրել, առատ կաթ ստանալ, քան երեքը վատ սնունդ տալ և գրեթէ ոչինչ չստանալ: Անհրաժեշտ է սերունդը ազնուացնելու համար

բուրդա բերել տալ և գոմանոցների ներքին կազմը բարեփոխել:

Անասնապահութիւնը սերտ կապ ունի հողագործութեան հետ, մին առանց միւսի անկարելի է մեղանում, քանի որ մեր պայմանները ուրիշ են, մեր հողերը ոչ չողու կամ այլ ուժով են մշակուում և ոչ էլ արհեստական պարարտացուցիչ միջոցով պարարտացնում: Ագարակի անասուններից շատերը փչացած են, որը ծերութիւնից, որը վատ խնամատարութիւնից և թէ անկանոն պահելուց և վատ սնունդից: Այդ դրութեամբ կարծիք չկայ, որ դրանք բացի աննշան արգիւնք տալը և հազիւ հազ իրենց ծախքերը ծածկելը, չեն կարող ուրիշ կերպ լինել:

Ագարակը պիտի առնուազը ունենայ 3—5 գութանի ապրանք, 50—60 կթան կով ու գոմէշկով, որ կարելի լինի թէ չարունակ նորերով փոխարինել ծերերին և թէ կաթնատնտեսութիւնից վեհարանի, միաբանութեան և ձեմարանի պահանջներին մասամբ բաւականութիւն տալ:

Ե. Արօտանք եւ խոտահարք: Տաւարապահութեան հետ կապուած է արօտատեղի և խոտահարքի խնդիրը, թէ ինչ քանակութեամբ խոտ կարելի կլինի հնձել 150 դեռետալին խոտահարքից, այդ կախուած է նրա խնամքից ու պահպանութիւն չեն տալիս արօտատեղերին ու խոտահարքին և ինչպէս հարկն է չեն խնամում, դրա համար էլ աննշան արգիւնք են ստանում: Մեր մարգերն ու արօտատեղերը գլխաւորապէս փչանում են մեր անհեռատնտեսութիւնից, երբ առատ պաշար չունենալով, ստիպուած ենք լինում դեռ գարնան սկզբին խոտը քիթը չբարձրացրած՝ տաւարը արօտատեղ կամ խոտահարքը հանել և անասուններին կերցնել կամ ոտնատակ տալ, որով կիսով չափ պակասում է հունձը: Մի կողմը թողնենք և այս, որ խոտահարքն էլ հացաբոյսերի պէս որոշ խնամք է պահանջում:

Նայելով մեր պահած տաւարի ու ձիերի քանակին, ագարակը պիտի աշխատէ միշտ երկու տարուայ պաշար ունենալ իր ձեռքի տակ և բացի այդ մտցնէ մի քանի աւելի աննդարար բոյսերի մշակութիւնը, ինչպէս առուոյտի, կորնգան և ուրիշ բոյսերի: Առուոյտի համար ընտիր հողեր շատ կան,

մտադիր ենք այս տարուանից տարեկան 10 դես. տեղ առ-
ւոյտ ցանել զարնանավարի հետ և հետզհետէ ընդարձակելով
հասցնել մինչև 100 դես. եթէ միայն ջրի կողմից ապահովու-
թիւն կլինի, որպէս զի առւոյտին յաջորդաբար փոխարինէ
բամբակի և հացաբոյսերի մշակութիւնը և այս ձևով բոլոր
հողերը կարելի լինի պարարտացնել:

Խոտահարքը կամ զորուղը մինչև այսօր հնձում է
ձեռքի աշխատութեամբ և ինչպէս հաշիւներից երևում է
հունձը նստում է դեսեատինին 8—9 ր. այնինչ հնձող մե-
քենայով նոյն աշխատութիւնը կնստի երեք անգամ պակաս
և այն առաւելութիւնը կունենայ, որ հնձուած խոտը համա-
հաւասար շերտով գետնին փռուելով՝ մի 10 ժամուայ մէջ
չորանում է և կարելի է հաւաքել, այնինչ գերանդիով հըն-
ձածը միմեանց վրայ կուտակուելով՝ մի մասը շատ չորանա-
լուց կորցնում է աննդարար նիւթը, իսկ միւս մեծ մասը
արևի երես չէ տեսնում, ժեժ է մնում և շատ անգամ խո-
նաւութիւնից բորբոսնում: Խոտահարքի համար պէտք են
երկու հնձող մեքենաներ և մի խոտ հաւաքող ձիու փոցխ:
Խոտահարքում մի էական փոփոխութիւն, որ պիտի մտցնուի
և կարևոր է, այդ նրա վրայ ջուր դուրս բերելն է, որի հա-
մար մօտ 500 ր. կգնայ: Զուրը անհրաժեշտ է մանաւանդ
ամառը, երբ այլ ևս զորուղի վրայ չէ գնում և արօտ գնա-
ցած տաւարը մնում է ծարաւ: Դորուղի ստորերկրեայ ջուրը
առատ է և գտնւում է 2—3 արշին խորութեան վրայ: Զուր
հանելու համար հիւսիսային կողմից 40—50 սաժէն երկայ-
նութեամբ արևմտքից դէպ արևելք մի առու պիտի փորել
տալ և մէջ տեղի վրայ ջուրը կետրոնացնելով՝ այնտեղից մի
ուրիշ ուղղահայեաց առու հանել մինչև ջրի գետնի մակի-
բեղթը գուրս գալ:

Ը. Շերամապահութիւն: Շերամապահութիւնը մեծ տըն-
տեսութեան մէջ, ինչպիսին Մայր Աթոռինն է, չէ կարող
նիւթական շահի տեսակէտից, լայն ծաւալ ունենալ և ար-
դիւնաբեր լինել, իսկ բարոյական տեսակէտից չերամատուներ
իրբեւ վարժոց, գործնական պարապմանց տեղ, թէ ճեմարանի
աշակերտների և թէ ժողովրդի համար, անհրաժեշտ է պահել
այն չափաւ, որչափ ներում են չերամատուներ և թթենիները:
Եթէ չըջակայ գիւղերում տարածուի չերամապահութիւնը,

այնժամանակ կարելի է ոյժ տալ և չերամի սերմ կամ ձու-
պատրաստելուն և տարածել ժողովրդի մէջ չափաւոր գնով:

Թ. Բանջարանոց: Մայր Աթոռը քանի տարիներ է, որ
բանջարանոց չունի իր պէտքերի համար. այս տարի մտադիր
ենք մի դեսեատին տեղ յառկացնել ձակընդեղի, գաղարի,
դդումի, շաղգամի և այլ բոյսերի իրբեւ փորձ տաւարը կե-
րակելու:

Ժ. Թռչնապահութիւն: Ագարակը թռչնապահութիւն
չունի և միաբանութիւնը կամ վանական կառավարութիւնը
դրսիցն է իր պէտքը լրացնում. այնինչ այդ ձիւղը մտցնելը
անհրաժեշտ է, քանի որ մեծ ծախք չէ պահանջում, թռչուն-
ները 9 ամիս դրսում քճուճ անելով են կերակրւում և ինչ
ծախք էլ որ լինի, կորած չէ, աւելորդով յետ կտայ: Մենք
նպատակայարմար ենք գտնում այս տարուանից այդ ձիւղը
ևս բանալ, հետզհետէ ընդարձակել և աւելի ձեռնառու դնե-
րով խոհանոցին ու միաբանութեան համար ձու և հաւեղէն
մատակարարել:

ԺԱ. Բնակարանի հարցը եւ այլ պակասութիւններ:
Ագարակում, ինչպէս յիշեցինք, ծառայողաց համար ոչ միայն
բնակարան չկայ, այլ և յարմարութիւն պառկելու, մարդա-
վայել նստելու, հիւանդին առանձնացնելու կամ դարմանելու:
Շէնքերը որչափ հնարաւոր է պէտք է յարմարեցնուին, գո-
մանոցների սալայատակները դար ու փոսեր են կազմուել,
ուղղուելու պէտք ունեն, լուսամուտներ չկան, պիտի բա-
խուին, կտուրները սւաղուին: Զկան սալերը տակը քաշելու
ծածկարան, ապրանք դարսելու տեղ, անհրաժեշտ զործիւ-
նիւր—մինչև անգամ կացին, բահ, թիակ, եղան, սրոցաբար,
մանգաղ, գերանդի: Զկան անառնոց հիւանդութեանց դէմն
առնելու համար դեղորայք, չկայ գիւղատնտեսական գրադա-
րան են են:

Մի կողմը թողնելով վարչական և տնտեսական մասին
խօսելը, պէտք է նկատել, որ գիւղատնտեսութեան այլ և այլ
ձիւղերը չլթայի պէս օղակ օղակ իրար հետ կապուած են,
չէ կարելի մին անել միւսը թողնել, ձիւպահութիւնը, տա-
ւարապահութիւնը, հողագործութիւնը, այգեգործութիւնը,
ամենն էլ իրենց պահանջը և ծախքը ունին և այս ու այն

բարեփոխութիւն կամ նոր կարգ մտցնելը կապուած է որոշ ծախքերի հետ,

Գիւղատնտեսութեան մէջ կալուածատիրոջ կամ կառավարչի ջանքը շատ անգամ անդոր է տիրող կարգերի դէմ, նրա գործունէութիւնը դրուած է որոշ սահմանների մէջ, նրա քմահաճոյքից չէ կախուած այս ու այն նորութիւնը մտցնելը կամ ձև տալը, ճիշտ է շատ բան է կախուած կառավարչի հմտութիւնից, նրա տաքտիկայից, բայց շատ բան էլ կախուած է կլիմայական, հողի և տեղական պայմաններից, որը չպէտք է անտես անել:

Միանգամից պահանջել, որ մի քայքայուած այգու կամ կալուածքի վրայ արուած ծախքերը նոյն տարին այնքան արգիւնք տայ, որ նա չոչափելի լինի, այդ անկարելի է:

Մեր կալուածատէրերի մի մեծ սխալը կամ թիւր հասկացողութիւնը գիւղատնտեսութեան վերաբերութեամբ հէնց այն է, որ նրանք աչքի առաջ չունեն որ ամեն տեղ, ամեն երկրում, ուր գիւղատնտեսութիւնը որոշ սխառմի տակ է դրուած կամ որոշ ուղղութեան մէջ մտած, նրանք այն մեծ պահանջները չեն անում, ինչ որ մեղանում:

Մի կալուածքի արդիւնաբեր կամ անարդիւնաբեր լինելը պէտք է չափել նրա վրայ դրած կապիտալի քանակից և նրա բերած տոկոսից: Իսկ գիւղատնտեսութեան մէջ ընդունուած է այս՝ որ հիմնական անշարժ կապիտալը (չինութիւններ, այգի, անտառ) պէտք է բերէ 3—3½ 0/0, հիմնական շարժական կապը (անասուն, մեքենաներ են.) 4—6 0/0, իսկ չրջանադարձութեան մէջ եղած գումարը 8—10 0/0: Առհասարակ եթէ մի կալուածք 4—5 0/0 արդիւնք է բերում, նա համարուում է օրինակելի և կանոնաւոր հիմունքների վրայ դրուած: Առ այժմ ճշգիւ որոշել թէ վանքի ագարակը, այգիները, հողերը ինչքան արդիւնաբեր են, դժուար է, քանի որ գնահատուած չեն ոչ այգիները, ոչ հողերը և ոչ ունեցած շարժական ու անշարժ դոյքը:

Մայր աթոռի գիւղատնտեսական բաժնի մէջ բարեփոխութիւններ մտցնելը անհրաժեշտ է, նա չպիտի վախենայ ծախքերից. մի անգամ որոշուած նպատակին յամառ կերպով պիտի հետեւէ և ինքը օրինակ լինի իր տնտեսութեամբ չրջապատող ժողովրդին, որ կարօտ է իր աջակցութեան, բարոյա-

կան օգնութեան:

Թէ այս 1906 թուին ագարակը ինչ ծախքեր ունի անելու և ինչ արդիւնք է սպասում, այդ ներկայացնում ենք առանձին նախահաշուով, որը հիմնուած է մեր երկարամեայ փորձերի վրայ և շատ ու քիչ տարբերութիւն դուցէ լինի թւերի մէջ, որովհետեւ մեզ ծանօթ չեն տեղիս պայմանները և մշակութեան վերաբերեալ ելից և մտից որոշ հաշիւները, որը կաշխատենք շուտով պարզել:

Ահա 1906 թւին Սինօգին ներկայացրած մեր տեղեկագիրը, ուր ցոյց է տուած վանքի տնտեսական դրութեան պատկերը և մեր դժած ճանապարհը:

Մենք 1906 թւից, որչափ ներեցին վանքի նիւթական միջոցները, ձեռնարկեցինք հետզհետէ իրագործել մեր ծրագիրը, իսկ թէ ինչ հետեանք հասանք, այդ հետաքրքրողը կտեսնէ մեր երկու տարուայ հաշիւներից, այն է 1906 և 1907 թուականների, որից երևում է որ առաջին տարին, չնայելով որ մենք չէինք կարող շատ բան փոխել տնտեսութեան մէջ, քանի որ դժուար էր տասնեակ տարիներով արմատացած սովորութիւնների դէմ մաքառելը, այնուամենայնիւ առաջին տարին մենք 9000 բուրլի դիֆեցիտը իջեցրինք 1868 բուրլու, որը ոչ թէ կորուստ պէտք է համարել, այլ 30 դեսետին այգիների վերանորոգութեան համար անհրաժեշտ ծախք, իսկ 1907 թուին մենք զուտ արդիւնք ունեցանք 12,000 բուրլի: 1906 և 1907 թւին վանքի տնտեսութեան մէջ մտցրինք այս ու այն մեքենաների դործածութիւնը — բերել տուինք հնձող և հնձող-կապող մեքենաներ թէ հացաբոյսերի համար և թէ խոտի, խոտ հաւաքող մեքենայ, ցորեն կալսող, քամող, գիւլիւ հանող, խաղող ջարդող, մզող, բամբակ մաքրող մեքենաներ և այգիները բժշկելու համար սրսկիչ և ծծումբ փշող գործիքներ, որոնք յաջողութեամբ դործադրուեցան և կգործադրուին այսուհետեւ, թեթեւեղիով թէ ձեռքի աշխատութիւնը և թէ աւելորդ ծախքերը:


Թումանի քանի տարի աչքաթող եղած այգին վերանորոգուեցաւ, Ղոթի այգու մէջ երկու դեսետին դատարկ տեղ վազեր աշխուեցին, գերեզմանատան կից և Գայիանէի կից հողերում ու բուլվարում ծառեր ու վազեր տնկուեցին, 6 դեսետին բարդի տնկուեցաւ, բայց ջրի պակասութեան

պատճառաւ մեծ մասը փչացաւ, չինուեց ընդարձակ սարայ կողքերը և սայլերը տակը հաւաքելու: չինուեց դոմանոցին կից մի սենեակ, Գայիանէի վանքի ճանապարհը բացուեց, երկու կողմից պատ դրուելով, մի դեպքատին առույտ ցանուեց, որը 1700—2000 խուրձ անցեալ տարի առույտ է տուել, զնուել են 1800—2000 վեղրի ամանեղէն, չինել ենք տուել գինի եփ տալու չաներ, տաշտ, ձեռք ենք բերել մի ձի, չինել ենք տուել 5 սայլ, նորոգել ենք կտուրները, բակի պատերը, սւաղել տուել ակոռատան ներսը, կարգաւորել ագարակի սենեակները, այգիների փլած պատերը նորոգել, անտառի ջրառուները մաքրել, և հարիւրաւոր բահ, թիակ, թոխի, եղան, փողխ, կացին, քլունդ և այլ պարագայք ձեռք բերել, որոնք պակասոււմ էին այս մեծ տնտեսութեան:

Միանգամից վերականգնել մի քայքայուած տնտեսութիւն անհնարին է, դեռ չատ բան կայ անելու, չատ բան փոփոխելու, որը թէ ժամանակի կարօտ է, թէ նիւթական միջոցների և մանաւանդ ջրի: Այս վերջինը արդէն կապոււմ են մեր ձեռները և ոչ պակաս խոչընդոտ լինոււմ մեր բարեփոխութեանց ծրագիրը իրագործելու:



ՀՀ Ազգային գրադարան



NL0163197

